

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 29

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

09.11. 2001թ.

ժ. 14.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), խորհրդի անդամներ՝ Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Վ. Դանիելյան, խորհրդի քարտուղար Ա. Հարությունյան

Հրավիրված էին՝

Հ. Հակոբյան (*Առևտրի և այլ ծառայությունների բաժնի պետ*), Ս. Գարիբյան (*Ժողովրդագրության և մարդահամարի բաժնի պետ*), Գ. Սարգսյան (*Վիճակագրական դասակարգիչների բյուրոյի պետ*), Վ. Գևորգյան (*Մարդահամարի վարչության տնտեսական բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների և միջազգային համադրումների բաժնի պետ*), Ն. Պողոսյան (*Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ*)

Օրակարգի նախագծում՝ չորս հարց.

1. «Ապրանքաշրջանառության ծավալի մասին /Ձև թիվ 1-առևտուր/» ամսական պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման Հրահանգը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Հ. Հակոբյան/
2. «Մատուցված ծառայությունների ծավալի մասին /Ձև թիվ 1- ծառայություններ (ամսական) և Ձև թիվ 1-(եռամսյակային, տարեկան)/» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման Հրահանգը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Հ. Հակոբյան/
3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին՝
 - 3.1 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 24-ից սեպտեմբերի 30-ը ՄԱԿ-ի Խաղաղ Օվկիանոսի և Ասիայի վիճակագրական ինստիտուտում (SIAP, Ճապոնիա, Տոկիո) կազմակերպված «Կենտրոնական Ասիայի երկրների համար վիճակագրության հավաքագրում, վերլուծություն և մեկնաբանություն. միջին և երկարաժամկետ տնտեսական կանխատեսում» ուսումնական դասընթացին մասնակցության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Ա. Աղազարյան/
 - 3.2 Հաշվետվություն 2001թ. սեպտեմբերի 17-21-ը Թբիլիսիում կայացած «Ժողովրդագրության վիճակագրություն» նախագծի «Միգրացիայի հետազոտություն» բաղադրիչի ներքո «TACIS» ծրագրի շրջանակում Թբիլիսի կատարած այցելության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Ս. Գարիբյան/
 - 3.3 Հաշվետվություն 2001թ. սեպտեմբերի 24-26-ը Թբիլիսիում կայացած «Վիճակագրական դասակարգումներ» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Գ. Սարգսյան/
 - 3.4 Հաշվետվություն 2001թ. հոկտեմբերի 1-5-ը Ռիգայում ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական բաժնի կողմից կազմակերպված «Մարդահամարի քարտեզագրումը և տարածումը աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) միջոցով» թեմայով սեմինար դասընթացի վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Վ. Գևորգյան/
 - 3.5 Հաշվետվություն Եվրոպական միջազգային համադրումների ծրագրի շրջանակներում 2001թ. հոկտեմբերի 1-5-ին Մոսկվայում կայացած սեմինար-խորհրդակցության և նրա

արդյունքներից բխող ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության խնդիրների մասին.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/

3.6 Հաշվետվություն PADCO Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի շրջանակում 2001թ. հոկտեմբերի 8-15-ը Կիև կատարած աշխատանքային այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ն. Պողոսյան/

3.7 Հաշվետվություն Շրջակա միջավայրի վիճակագրությանը նվիրված հոկտեմբերի 1-12-ը Բանգկոկ քաղաքում ՄԱԿ-ի ԱԽՕՏՆ-ի (Ասիայի և Խաղաղ Օվկիանոսի տնտեսական և սոցիալական Հանձնաժողով, UN/ESCAP) կազմակերպված չորրորդ աշխատանքային հանդիպման վերաբերյալ

/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/

4. Այլ հարցեր

4.1 ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կողմից հավաքագրվող «Արտակարգ իրավիճակների մասին վարչական վիճակագրական հաշվետվությանը (ձև 1-արտակարգ իրավիճակ)» հավանություն տալու մասին.

/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը քվեարկությամբ հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Ապրանքաշրջանառության ծավալի մասին /Ձև թիվ 1-առևտուր/» ամսական պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Հ. Հակոբյան/

Նշվեց, որ Խորհրդի հաստատմանը ներկայացված պետական վիճակագրական հաշվետվության ձևով նպատակ է հետապնդվում հավաքագրել տեղեկատվություն առևտուր իրականացնող կազմակերպությունների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ:

Որոշեցին՝ հաստատել «Ապրանքաշրջանառության ծավալի մասին /Ձև թիվ 1-առևտուր/» ամսական պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման Հրահանգը:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Մատուցված ծառայությունների ծավալի մասին /Ձև թիվ 1- ծառայություններ (ամսական) և Ձև թիվ 1-(եռամսյակային, տարեկան)/» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Հ. Հակոբյան/

Նշվեց, որ Խորհրդի հաստատմանը ներկայացված պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով նախատեսվում է ստանալ վիճակագրական տեղեկատվություն ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ըստ տեսակների մատուցված ծառայությունների ծավալների վերաբերյալ:

Որոշեցին՝ հաստատել «Մատուցված ծառայությունների ծավալի մասին /Ձև թիվ 1- ծառայություններ (ամսական) և Ձև թիվ 1-(եռամսյակային, տարեկան)» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման Հրահանգը

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին՝

3.1 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 24-ից սեպտեմբերի 30-ը ՄԱԿ-ի Խաղաղ Օվկիանոսի և Ասիայի վիճակագրական ինստիտուտում (SIAP, Ճապոնիա, Տոկիո) կազմակերպված «Կենտրոնական Ասիայի երկրների համար վիճակագրության հավաքագրում, վերլուծություն և մեկնաբանություն. միջին և երկարաժամկետ տնտեսական կանխատեսում» ուսումնական դասընթացին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Աղազարյան/

3.2 Հաշվետվություն 2001թ. սեպտեմբերի 17-21-ը Թբիլիսիում կայացած «Ժողովրդագրության վիճակագրություն» նախագծի «Միգրացիայի հետազոտություն» բաղադրիչի ներքո «TACIS» ծրագրի շրջանակում Թբիլիսի կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Ղարիբյան/

3.3 Հաշվետվություն 2001թ. սեպտեմբերի 24-26-ը Թբիլիսիում կայացած «Վիճակագրական դասակարգումներ» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Սարգսյան/

3.4 Հաշվետվություն 2001թ. հոկտեմբերի 1-5-ը Ռիգայում ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական բաժնի կողմից կազմակերպված «Մարդահամարի քարտեզագրումը և տարածումը աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) միջոցով» թեմայով սեմինար դասընթացի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Վ. Գևորգյան/

3.5 Հաշվետվություն Եվրոպական միջազգային համադրումների ծրագրի շրջանակներում 2001թ. հոկտեմբերի 1-5-ին Մոսկվայում կայացած սեմինար-խորհրդակցության և նրա արդյունքներից բխող ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության խնդիրների մասին.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/

3.6 Հաշվետվություն PADCO Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի շրջանակում 2001թ. հոկտեմբերի 8-15-ը Կիև կատարած աշխատանքային այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ն. Պողոսյան/

3.7 Հաշվետվություն Շրջակա միջավայրի վիճակագրությանը նվիրված հոկտեմբերի 1-12-ը Բանգկոկ քաղաքում ՄԱԿ-ի ԱԽՕՏԱՀ-ի (Ասիայի և Խաղաղ Օվկիանոսի տնտեսական և սոցիալական Հանձնաժողով, UN/ESCAP) կազմակերպված չորրորդ աշխատանքային հանդիպման վերաբերյալ

/Ներկայացնող՝ Յու.. Պողոսյան/

Որոշեցին՝

բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4.1 ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կողմից հավաքագրվող «Արտակարգ իրավիճակների մասին վարչական վիճակագրական հաշվետվությանը (ձև 1-արտակարգ իրավիճակ)» հավանություն տալու մասին.
/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

1. Հավանություն տալ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կողմից հավաքագրվող «Արտակարգ իրավիճակների մասին վարչական վիճակագրական հաշվետվությանը (ձև 1-արտակարգ իրավիճակ)»:
2. «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի՝ վիճակագրական գաղտնիքին առնչվող դրույթներով պայմանավորված՝ առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությանը՝ հաշվետվության ձևի դիմային էջից հանել «Տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը երաշխավորվում է օրենքով» բառակապակցությունը:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Հարությունյան